

# ՇԱՐՋՈՒՄ

Նամակ եւ դրամ դրկեց  
կոմպոզիտիան հասցեից .

Редакция на вестник  
«Шаржумъ»  
Варна.

Redaction du journal  
«Charjoum»  
Varna (Bulgarie).

ԳԻՆ 10 ԱՆԹԻՄ

*Remme (Futbala)*  
*M. 4*

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆԿՈՒԻ ՉՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ.  
А Д В О К А Т Ъ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ  
Պուշկարիոյ համար տարեկան 10 ֆրանկ . վեցամսեայ 5 ֆրանկ : Արտասահմանի համար տարեկան 12 ֆրանկ , վեցամսեայ 6 ֆր .  
ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐԵԼԻ  
Գրութիւնք եւ չիւն տրուիր :  
Իրանուցեան տոյր 20 սանթիմ Է :

ԳԻՆ 10 ԱՆԹԻՄ

## ԲՈՒՆ ՆՊԱՏԱԿԸ

Տարակոյս չիկայ թէ մեր հանրային կեանքի բոլոր անկներն ալ կը դառնան , իրենց ծայրագոյն և վերին նպատակակէտ ունենալով Հայրենիքի փրկութիւնը :

Ասոր համար է որ մենք կը բարաններ հաստատած ենք և ուսուցիչներ կը պահենք . եկեղեցիներ ունինք և հոգեւորականութիւն մը կը սնուցանենք . ընկերութիւններ հիմնած ենք որոնց կաշակցինք . մամուլ մը ունինք որ դարձեալ մեր զոհողութիւնով կանգուն կը մնայ :

Մեր ազգին պէս բացառիկ պայմաններու տակ ճնշուած տարր մը է թէ իր հասարակային կեանքին մէջ սովորական ըմբռնումներով լեցուի՝ որքան ցաւալի այնքան ալ ծիծաղելի հակասութեան մէջ ինկած կըլլայ :

Մենք մեր կրթարաններէ ալ կընկալելու չենք աւանդական «բարի քաղաքացին» . այլ ազատութեան սիրով լեցուած հայ զինուորը : Եւ յետոյ , ինքզեմ , ո՞ր քաղաքին բարի քաղաքացին ըլլալու սահմանուած ենք մենք այդ կրթութիւնով , որ արդարեւ կրնայ արտադրել շատ շատ խելօքի վաճառական մը , հաւատարիմ գործակատարը և կամ տարեկան քանի մը լէվ ազգատներուն յատկացնող և ազգային ամէն պարտքերը լրացուցած համարուող «բարերարը» :

Մենք մեր եկեղեցիէն չենք ակնկալել միայն երկնային արքայութիւնը . և մեր քարոզիչներուն բերնէն Պօղոս առաքեալին թղթերուն պատմութիւնը լսելէ ձանձրացած ենք : Աղօթքի մրմունջներէն վեր՝ ազատութեան ու խաղաղ պէտք է որոտայ այնտեղ . և խունկի բուրու մնեալէն վեր՝ գերագոյն անկեղծ որոշումներու շանթը պէտք է պայթի տաճարին կամարներուն տակ : Նոյնը ընկերութիւններէն : Ընթերցարանը մեր մէջ միտքերը կը մշակէ , որպէս զի այդ

միտքը հայրենիքի օգտակար հանդիտանայ : Եւ երբ որ ուրիշ ազգեր իրենց ազգատները մարդասիրական , եզրայրասիրական նկատումով կը խնամեն , մեր բարեգործութիւնը աւելի՛ դրական է . խաչի ընկերութիւնն է որ վերաւորները կը խնամէ բանակին պարագները կարենալ լեցնելու համար :

Այս է մեր բուն նպատակը . Անոնք որ դպրոցին մէջ բարի քաղաքացին , ու եկեղեցիին մէջ երկնից արքայութիւնը միայն կը փնտռեն , մեր կեանքի աւանդներուն հակառակ ուղղութիւն մը տուած կըլլան , և կամ ապարդիւն խօյ դարձուածք մը խանդարուած մեքենայի : Իբրեւ գիտակից և խորհող անհատներ՝ սերտիւ փարած մնանք մեր բուն նպատակին , առանց ու եւ ձախողուածքէ վշտելու , և առանց թողլու որ միջադէպ մը ուշադրութիւնը ուրիշ կողմեր թափառեցնէ դատարկապարտի մը դանդաղ զննարով :

Ցաւալի է հաստատել թէ ոչ մէկ ազգ գուցէ մեզ չափ յարմարութիւններ չունենայ ենթարկուելու «չեղեցուցիչ» քաղաքականութեան մը : Կենսական խնդիրներու ամենէն հրատապ վայրկեանին մէջ , դէպք մը , ճանձի մը բղղիւնը մտածութեան տարբեր հոսանքներու մէջ կըրնայ նետել մեղի , և բուն նպատակը մոռցնել տալ : Ազգային անկեղծ գաղտնիքով միթէ ճանձի բղղիւններ չեն ընթերցարանի մը , ուսուցչի մը խնդիրները , լրագրի մը յօդուածը և կամ , ի՞նչ գիտնամ , օրուան հազարու մէկ կանխուսափելի մանրագէտները , որոնք կը յափշտակեն մեզի :

Հայ մը չի կայ աշխարհի մէջ որ սրտին խորը չի սնուցանէ հայրենիքի փրկութեան զգացումը : Գերագոյն կապն է այն որ կրօնքին չափ և երբեմն անկէց աւելի զօրաւոր կերպով կը յօգէ հայը հայուն : Անցած է այս զգացման պղտորական շրջանը և փթթելու , նայնիսկ յորդելու շրջանը թեւակոխած : Ինչքէ է որ մէկը այս կարգի վեհ

նպատակ մը կրէ և իր միջոցներուն բոլորովին ներնակ ուղղութիւն մը տայ , առանց դպրոց , եկեղեցի , ազգ և մամուլ լարելու և գնելու այնպիսի ընթացքի մը մէջ որ շիջուակ նպատակին հասցնէ , եւ որ աւելին է , փոխանակ ամէն մէկ միջադէպի իրեն արժանաւոր տեղը ու կարեւորութիւնը տալու՝ ողջմտութեան և անկեղծութեան թելադրած չափով , ընդհակառակը կուրորէն և գազանի մոլեգնութեամբ ամբողջովին մէջը նետուի . ծծուի անկէ , պարտք , Հայրենիք և բուն նպատակ մոռնալու աստիճան :

ԳԱՄԵՐ-ԱՐՇԱԽԻՐ

## ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

Եւ սակայն կեանքը իր տարօրինակ երեւոյթները ունի : 86 թուականին հայրենի երկրի հանգամանքները , շնորհիւ թրքական զարգաբանականութեան , սակաւ փոխուելով , Տուտուխեան ստիպուեցաւ Պօլիս ապաստան որոնել ստեղծի մը համար . գրէթէ երկու տարի չափ Պօլիս անցուցնելով , երբեք հաճոյք ու փափագ չունեցաւ հոն ո՛ր եւ է պաշտօն փնտռելու , իր սիրական զբաղումն էր հայրենի աւանդութիւններու ու սովորութիւններու մասին գրել ու հայրենի երկրով վերադառնալ : Վօլթեր , Լամոնթիւն , Շէքսպիր , Հիւկօ , ամէն ալ ծանօթ էին իրեն , բայց՝ եղիչն ու իրենց արտի գրքերն էին : Ինքը քաջ գրաբանագետ մըն էր , սակայն նոր հայրենիք աւելի կը սիրէր . ո՞նք կարուկ , պարզ ու անսեթեւեթ էր , իրականութիւնը իր բնաբանն էր , ինչ որ վերացեալ էր , իր մտքին հետ կապ չունէր :

Իր հայրենասէր ջերմ սենյը մղեց զինք Միացեալ Ընկ . Բազրեւանդի գպրոցի Տնօրէնութեան պաշտօնով զէպի Արարատեան այդ աշխարհը : Որպէս գաղափարի ու սրտի մարդ՝ ինքն իր գործին նուիրուած՝ հոգի կուտար իր խնամքին յանձնուած Հայաստանի մանուկներուն վրայ , որոնք իր խօսքով , «որ մը հայութեան արի զինուորներ պիտի լինէին» , Շատ անգամ կը գրէր ինձ Պօլիս ու հայրենի լեզուով կը նկարագրէր այն ամենամեծ հաճոյքը զոր կըզգար ինք , հայրենի հողին վրայ , հայ մանուկները դաստիարակելու անձնուէր գործին մէջ : Իր այդ թան

կազին նամակները զոր նուիրական իրի մը պէս պահեր էի , 91ին եւ 92ին նազըմի կողմէն ձերբակալուեալու , գրաւուեցան եւ ալ ինձ չը վերադարձուցին զանոնք : 92 թուականին Բագրեւանդի մէջ կառավարութիւնը կը ձերբակալէր զայն , իր մէկ երկու պաշտօնակիցներով : Երկար բարակ հարցաքննութիւններէ ետք երկու տարիէն աւելի Պայագիտի բանտին մէջ կը պահեն : Ու յետոյ , Սուլթանին մէկ քմահաճոյքով ինչպէս բանտարկեալներէ ոմանք կազատուին , Յ. Մ. Տուտուխեան ալ Պայագիտի բանտէն հանուելով Պիթլիս կը բերուի ու նորէն կը բանտարկուի Պիթլիսի ազգային ամէն գաղափար , մանաւանդ աւագանին , արդէն մեծ սէր ու համարում ունէր անոր վրայ , ուստի տեղացի ամենէն զարեցիկ ու թրքական մտրոք քաղաքականութեան հետեւող մէկը անձամբ երաշխաւորելով նահանգապետի քով Յ. Մ. Տուտուխեանի պատուաւորութեան , բանտէն հանել տալէ ետք տեղւոյն երկու վարժարաններուն Տնօրէն Ուսուցիչ կը կարգեն զինքը : 95 Յունուարին էր որ կը գրէր ինձ թէ «կեանքիս այս տարօրինակ փոփոխումովը՝ զարձակալ կարծես թէ նոյնը եմ , ինչ որ էի 80 թուականին . . . ո՛չ բանա ու ո՛չ թուրքին հալածումը մազի չափ չեն շեղած զիս իմ փափագներէս» : Դարձեալ նոյն զուարթ Տուտուխեանը իր նամակներէ մէջ . . .

Հազիւ 4—5 ամիսներ կը շարունակէ իր այս նոր պաշտօն , բանտի խոնաւութենէն իր առողջ կազմուածքին վրայ առաջ եկած հիւանդութեամբ մը քանի մը օր անկողին կը մանայ , ու 95 յունիսի մէջ , Գէնտէրեան եղբարց տան մէջ կը մեռնի :

Այս ցաւալի լուրը՝ երբ առաջին անգամ Պոլսոյ Հայրենիք օրաթերթին մէջ կարդացի , բնաւ չուզեցի հաւատալ աչքիս , կարծելով թէ ուրիշ բան տպուած է այդ յօդուածին մէջ ու ես սխալ կը կարդամ . միթէ կարելի՞ էր հաւատալ որ , մարմնով ու հոգեով առողջ , այդքան պարզասէր ու ժուժկալ , Հայաստանի ինքնատիպ գաւակը ոչինչ հիւանդութեամբ մը մեռնէր . . . Բայց վերջապէս տխուր իրականութիւնն ստուգուելով , սրտամորմոք ողբացինք այդ բարեկամի անդառնալի կորուստը , որու մասին արդէն ժամանակին Հայրենիք այնքան ազնուարար գրեց բաւական բան :

Պիթլիսի հայերը անոր յիշատակին իբրեւ յարգանք կարմրակ եկեղեցիի շրջափակին մէջ մեծ հանդէսով կը թաղեն Տուտուխեանի մար

*Mechekharis tsaparra*



նր որ ձեռնարկէ : Վասնորովեամբ եւ ապահովութեամբ կրնանք բսել որ երկրասարգութիւնը մինչեւ ցարդ առաջ գացած է, առանց ամենափոքր ուշադրութիւն անգամ դարձնելու զանազան մեքենայութիւններու, ահա այդ երկրասարգութիւնը իր բոլոր ձեռնարկները այսուհետեւ ալ քաջութեամբ առաջ պիտի տանի արհամարհելով միանգամայն այն մի քանիները, որոնք պատու ծերուկներ են իրօքով, իսկ իրօք ճշմարիտ երկրասարգութեան սրբը, ո՛չ աւելի ո՛չ պակաս : Ոչ միայն երկրասարգութիւնը «միս մի-նակ» մնացած չէ եւ չպիտի մնայ, այլ այդ երկրասարգութիւնը այսուհետեւ ալ պիտի մաքրէ եւ իր մէջ զուրս վտարէ այն տարրերը, որպիսիք են Շարժումի թիւ 17ի մէջ եղող հոստողը եւ իր նմանները :

Կը վերջացնենք մեր յօդուածը բնական իր վարչութիւնը իր ստանձնած պարտականութիւնը ամէն կերպով պիտի ջանայ կատարել, չնորհիւ այն կարող եւ անկեղծ յառաջգիտական երկրասարգներուն, որոնք իր շուրջն են համարուած :

Եւ անոնք որ զանազան միջոցներով կը ճգնին արգելաւոր վարչութեան մը հանգաւոր գործունէութեան արգելք հանդիսանալ, ամօթահար պիտի մնան եւ իրենց իրրիւ պատասխան միայն արհամարհանք պիտի ընդունին :

Յակոբ Պոյաճեան

Ռուստուքի ընթերցարանին շուրջ գործած այս վէճ շատ սին ու տալի կացուցիչ է : Թեր ու դէմ քաջընթաց խօսքեր, անհամ նախասինքներով լցուած, ու է լուծում կամ բարեփոխում չեն կըրնար առաջ բերել անհկ խնդիրներու մէջ, ընդհակառակը խառնակ ու անկերպարան վիճակ մը կը յօրինեն : Եւ յետոյ քիչ մը անձնականի գոյն ունեցող այսօրինակ վէճերով լրագրութեան սիւնակները կապտելը անիրաւութիւն է թէ մամուլին հանդէպ, որ շահեկան ըլլալէ կը դադրի, և թէ ընթերցողին հանդէպ որ

այլիւս ակնկալած օգուտը չի քաղեր :

Ուստի երկրորդ, երրորդ անգամ ըլլալով կը խնդրենք մեր արդոյ յօդուածագիրներէն որ անհիմն ու անիմաստ վէճերու մասին երկար գրութիւններ չըզրկեն միշտ հրատարակուելու համար : մանաւանդ խնայող ըլլան նախատական բառերու գործածութեան մէջ :

Ռուստուքի ընթերցարանի մասին խնդիրը փակուած կը նկատենք և թերուղէմ ունէ յօդուած հրատարակութեան չպիտի տրուի այլեւս :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Տնօրէն Խորհուրդս կը փութայ ծանուցանել որ ամսոյս 26ի երեկոյին գումարուած նախապատրաստական ժողովի մէջ, դասախօսութիւններու հետեւեալ ծրագիրը կազմուած է :

Այդ ծրագրի մէջ նշանակուած և կամ ատկէ գուրս ու է նիւթի դասախօսութիւնը ստանձնել փափաքողները կը հրաւիրուին գրաւոր կերպով դիմել Տնօրէն Խորհրդոյ :

Գասախօսութիւնները կը լինին ընդդիմախօսական :

Տնօրէն Խորհուրդ  
Երիտ. Ընթ. Ընկերութեան  
Ռուստուք, 31 Մարտ 98

Ծ Ր Ա Գ Ի Բ

1. Հայաստանի Աշխարհագրութիւն, պատմական այլեայլ ծանօթութիւններ :

2. Պալքանեան թերակղզիի մասին պատմական և աշխարհագրական տեղեկութիւններ : Պուլկար ազգի համառօտ պատմութիւնը մինչեւ այսօր :

3. Հայոց հին մատենագրութիւնը :

4. Հայոց նոր մատենագրութիւնը (Ռուսահայք և Տաճկահայք) :

5. Հայ լրագրութիւն :

6. Ռուսաստան, Ռուսահայք և Էջմիածին :

7. Տաճկաստան, Տաճկահայք և ազգային հաստատութիւնները վարող անձերու ընթացքը հայկական խնդրի տեսակէտէ :

8. Եւրոպական դրականութիւն (Անգլիական, Գերմանական, Ֆերմանական և Ռուսական) :

9. Կրթութիւն և ազգային ընկերական խնդիրներ :

10. Տնտեսական Աշխարհագրութիւն (համառօտ ծանօթութիւններ ամէն երկրներու տնտեսական վիճակի մասին) :

11. Առողջապահութիւն :

12. Իպտէն և իր փիլիսոփայութիւնը :

13. Կանանց խնդիր :

14. Տնտեսագիտական դպրոցներ (պատմական, ազատական և ընկերակարական) :

15. Ընկերարանութիւն և ընկերական խնդիր :

16. Եւրոպական քաղաքական կուսակցութիւնները և իրենց ծրագիրները :


17. Ընկերակարութիւն և անիշխանականութիւն :

18. Յեղափոխական ընկերութիւններ Եւրոպայի մէջ, իրենց ծրագիրները և գործելու եղանակները (պատմական տեսութիւն) :

19. Թէնը, իր փիլիսոփայութիւնը և միջավայրի թէօրիան :

20. Փիլիսոփայութիւն և իր գըլխաւոր բաժանումները :

21. Օկ. Գոնթ և դրական փիլիսոփայութիւնը :



ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

Պ Ա Տ Ե Ր Ա Չ Մ

Սպանիոյ և Մ. Նահանգներու միջեւ գիտնագիտական խզումը վերջնապէս տեղի ունեցաւ և թշնամութիւններն սկսան երկուստեք : Անգլ. լրագիրներու տեղեկութիւններուն նայելով պատերազմի պատրաստութիւնները առաջացած չեն Մ. Նահանգներու մէջ : Առնուազն 50,000 զինուոր պէտք է Բուպարի վրայ յարձակելու համար և հազար 18,000 մարդ համախմբուած է ծովեզերքը : Ժամանակի պէտք կայ անհրաժեշտ զորաբաժինը զինելու համար : Պատերազմական պիտոյքներու համար նոր նուազուրդներ կառավարուին և «հայրենասէրներ» Եանքիները առիթէն կօզտուին պետական գանձը քամելու համար : Աներեւակայելի գիներ կը պահանջեն : Նոյնը կընեն միլիտանտէր նաւայարդարները, որոնք առաւելակական գումարներ կը պահանջեն փոխադրանքներու համար : Ի՞նչ հակապատկեր այն զոհողութեան ոգիին հետ որ կը յայտնուի սպանիական ամէն դասակարգերու մէջ :

Ամերիկեան նաւատորմը Բէյ Ուէսթէն ճամբայ ելիւ է ապրիլ 10ին : Եւ «Նաչվիլ» յաճախորակը Սպանիական «Պուօնափանդուա» առեւտրական նաւը բռնելով Բէյ Ուէսթ տարեր է, անոր վրայ ումը արձակելէ ետք : Չարմանակին ան է որ դեռ երեք օր առաջ Ուաշինգթոնի կառավարութիւնը յայտարարած էր թէ կը հրաժարի ծովասպտակութենէ ի դէպ պատերազմի և ահա հիմա ինք կուտայ ասպտակութեան առաջին օրինակը :

Պատերազմի վերաբերեալ լուրերը չորրորդ երես :  
—)(—

ՎԱՐԳ-ՊԱՏՐԻՒՆԻ ԳԵՆԱՍԱԿԱՐԱՆԸ (14)

Այդ մարդը շարունակ Հայաստանցի մշակներէ մէջ էր եւ մեծ ժողովրդականութիւն էր վայելում ներքին մէջ :

Այդ տարի միջոց չունեցայ ծանօթանալ այդ հետաքրքիր անձնաւորութեան հետ :

Սակայն մի ուրիշ անգամ միջոց կուսենամ աւելի շատ խօսել այդ պարտնի մասին, որ թէեւ պարզ, բայց այնուամենայնիւ լաւ հայի սիրտ սնէր եւ իր միամտութեամբ խաղաղիկ էր դարձել մի քանի խաչագողների ձեռքում : Վերջապէս եկաւ հարցաքննութիւնների փամանակը, ճանապարհ ընկայ Բաքու : Ակսեցին քննութիւնները, զբաղմունքներս չսփազանց էին, այդ բաւական չէր, Գորջեանից նամակ մը էի ստացել որ յուլիսին պէտք է ճանապարհ ընկնէք. մօրեղբայրս էլ ամուսնանալու էր այդ տարի եւ հարցաքննիչ էր հրաւիրում :

Ձգային և բոլորովին սակնու վրա եղած գրութեան մէջ էի գրաղ-

վածս միջոցին գործն էր միայն գալիս : Անհրաժեշտ էր հարսանիքի գրեմալ : Այնուպէս կարող էի բոլոր ազգականներինս բաւական դրամ հաւաքել, մանաւանդ եթէ քրննութիւններս աջող վերջանային, միտք ունէի ասել որ դնալու եմ արտասահման ուսումս շարունակելու :

Գննութիւններս բաւական աջող էին գնում, գրաւորները բոլորը վերջացրել էի. սկսել էինք բանաւորը : Երկրաչափութեան քննութեան միջոցին ուսուցիչը, որը սարսափելի հայատեաց էր, ինձ սխալ համոզել որ իմ բացատրածը սխալ է. ես համոզվեցի. իմ ուղիղ սկսած երկրաչափական խնդիրը ջնջեցի եւ նորից սկսեցի. ընկայ սար ու ձոր. ուսուցիչը սկսեց փայտալ օձի հեզական փայտով. այդ փամանակ զգացի իմ խաբված լինելը, բարկացայ և կաւիճը նետեցի ուսուցչի վրա : Եւ յայտարարեցի որ չեմ ուզում քրննութիւնս շարունակել : Այդ միջոցներին ինձ հետ քննութիւն էր տալիս եւ մի երկրասարգ—Ս. Վ., որը

վերջը մտաւ յեղափոխական գործի մէջ եւ մինչեւ հիմա էլ գործում է :

Ամբողջ աշխատանքս կորաւ մի շար ուսուցչի, կամ թէ աւելի ճիշդը իմ դիւրագրութեան պատճառով, թէեւ զպրօցի տեսուչը ինձ յայտնեց որ եթէ ուզեմ կարող եմ սեպտեմբերին դպրոցը մտնել եւ միւս մայիսին քննութիւններս վերջացնել, սակայն խորհուրդ տուին որ աւելի լաւ է հիմակուհիմա Բաքուից հեռանալ, որովհետեւ ուսուցչի հետ ունեցած վարմունքս կարող է ինձ համար վտանգաւոր լինել :

Առանց երկար ու բարակ մտածելու ճանապարհ ընկայ Տփլիս, Գորջեանի հետ տեսնվեցի. որոշեցինք թէ երբ պէտք է անցնենք Տաճկաստան : Այնուհետեւ գնացի հայրենիք մօրեղբորս հարսանիքին ներկայ լինելու. այդ 88 թւականի յունիսին էր, Գորջեանը ինձ համար պէտք էր գրէր թէ որ օրը պէտք է քաղաքից դուրս գամ որ կարողանամ ճանապարհի կիսին, Ինիլջանում հանդիպել իրան եւ միւս ընկերներին որոնք Տփլիսից ճանապարհ պէտք է ընկնէին դէպ ի ներսան :

Հարսանիքից յետոյ մի շաբաթ էլ մնացի. սակայն Գորջեանից ոչ մի տեղեկութիւն չը կար. չափազանց սպասողական ու նեղրայիս վիճակի մէջ էի : Տարօրինակ յուզումները յաջորդում էին մէկը միւսի հետեւից. հայրենիքից բոլորովին հեռանալը, օտար եւ բոլորովին վայրենի երկիր գնալը եւ այնպիսի դժուարին ու վրէտանաւոր գործի ձեռնարկելը շատ անհանգստացնում էին ինձ երկար ու տաք գիշերները եւ վնասութեան ու ետ ընկրկելու աստիճանի հասցնում. երբեմն ուրախանում էի որ Գորջեանի նամակները ուշանում էին եւ փափագում որ այդ ճամբորդութիւնը չիրագործվէր, միայն թէ պատճառը իմ կողմից չը լինէր. ես ուստադրուած չը հանդիսանայի բնկերներս տառ. չէի կարողանում որոշել արդեօք իմ այդ փափագը ուստանումը վախկոտութեան ու թուլութեան արդեօք էր, թէ ուղղակի սկսել էի աւելի լրջօրէն մտածել այդ կարեւոր եւ դժուարին ձեռնարկի մասին :

(Շարունակելի)

ԲՕԼԻԹԻԳԱ

Մ Ո Ւ Հ Ա Ր Է Պ Է

Միւս թէմէի մասերիցա վէ Սպանիա պէյնինտէ մուհարէպէ պաշլանտը : Տիւնեանըն արդգաթը նազարը շիմտի պու տէհէթը լի միւսատէմէնին իւզէրինէ հասը օլունմուշ տըր :

Ի քի մէմէթէթլէրին գուվէթի հարպիէսի շունտան իպարէթ տիր :

Ամէրիգանըն 30 ատէտ պէօյիւք վէ քիւչիւք զըրհլըլարը օլուպ , պունլարըն 1,370տէն 11,400 թօնէլաթօ գուվէթի իսթիպակիէսի (տարողութիւն) վէ 1,600տէն 11,000 պէկիր գուվէթի վար տըր :

Ամէրիգանըն էն զիյատէ սըգընթըրը թայֆաճա օլաճագ տըր : Տօնանմա իշին լաղըմ օլարըր գատար առամը հօղ տըր :

Սպանիա տօնանմաը 21 ատէթ զըրհլըտան իպարէթ տիր , պունլարըն 1,030 տան 9,900 թօնօ գուվէթի իսթիպակիէսի վէ 1,600 տէն 18,500 պէկիր գուվէթի վար տըր :

Թօրփիլիճէ Սպանիա տահա զէնկին տիր և եէնի հարըլըմը պու սընըֆ վարըլարը մուհարէպէտէ տիւշման զըրհլըլարընը թաադիպ իտիպ պէօյիւք խըտմէթտէ պուլունաճագլար տըր :

լունան թայֆալարտան մատա 25,000 թալիմլի թայֆասը պուլունմագտա տըր :

Հ Ա Վ Ա Ս Ի Ս Ա Յ

Ինկիլթէրը հիւքիւմէթի ինկիլիզ զարիթէն Լիէ Ուաշինկիլթընա վէ անտէն Բուպայա կիտիպ ամէրիգալը աքթըրլէրին մանովրալարընա հաղըր պուլունմասընը էմը իթմիշ տիր :

Մուհարէպէ վագթընտա տէնիլ իւզէրինտէ պիթարաֆ վաբօրլարըն էմնիլէթի վէ միւս աֆասընա տայիր պէօյիւք տէվլէթլէր պէյնինտէ միւզաքէրէ ճէրէյան իթմէթտէ տիր :

Մ. Մաք Բիւնլի պիր էմիրնամէ չըզարըպ Բուպանըն ճէնուպ սահիլինին վէ զարպ թարաֆընտաքի Սիանֆուէկօս լիմանընը մուհասէրէյէ ալընմասընը էմը իթմիշ տիր :

Ճիւմուրիլէթ ըէիսի վարօր քէօմիւրիլին իլրաճը մէննի հագգընտա Ամէրիգա գօնդրէսիլինին վէրտիկի գարարը թաատիգ իթմիշ տիր :

Գէյ-Ուէսթտէն կէլէն թէլէկրաֆլարա կէօրէ , Ամէրիգա տօնանմաը ապրիլ 10տա սապահ պէշտէ օրատան չըզմըր տըր : Եսլընըղ տօգուլ առէտ վարօր գալմըր տըր :

Նաշլիլ քրուաղէրի «Պուօնապանթուա» նամ սպանեօլ վաբօրընը մէղքիւր լիմանա կէօթիւրմիշ տիր : «Նաշլիլ» էվլէլա սպանեօլ վաբօրը իւզէրինէ պօշ պիր թօք աթար , հալպուքի պու իլիթարը սայմայըպ հօլընը տէվամ իթմէթտէ օլտուզունան , Ամէրիգա քրուաղէօրի պիր իլըրլէ աթար : «Պուօնապանթուա» պայրաղընը աշաղա չէքէր վէ 20 քիշիտէն միւրէքքէպ թայֆասը թէսլիմ օլուր :

Գուպատաքի Սպանիա սէր գօմանտանը ժէնէրալ Պլանքօ պիր իլաննամէ չըզարըպ էհալիի սիլահպէտէտ (զէն ի ձեռին) տիւշմանըն հիւճիւմիլի կէրի սիւրմէկէ տալէթ իտէր : Պու իլաննամէտէն սօնրա , պէօյիւք գալպալըպ ժէնէրալ Պլանգօնըն գօնաղը էօնիւնէ կիտուպ տիւշմանա կէօյիւս վէրէճէկիլինի վատ իթմիշ տիր :

Մատրիտտէն չէքիլէն պիր թէլէկրաֆա կէօրէ , Սպանիա մէպուսան մէճիլիսինին աչըլտըղընտա վաթանրէրվէրանէ նիւմայիշաթ վուգու պուլմուշլար տըր : Գրալիցա քիւչիւք գրալ Ալֆոնսըր գուճաղընտա օլտուգու հալտէ կալէթ սուղիշլի պիր սէտա վէ վաթանրէրվէրանէ պիր իսահիլէրիսալէսինի (պատգամագիր) օգուճըր տըր :

Իշպու գրաաթ կիւրիւլթիլի էլ չըրմալարը իլէ գապուլ օլունմուշ տըր : Բրէնսիլէրալինանտ հաղըրթ

լէրի , խաթալըղընտան շիֆայա օլմուշ օլան վալիտէսի բրէնսէս Բլէմանթինէ զիյարէթ իթմէք , վէ տիկէր թարաֆտան զէվճէսի բրէնսէս Մարի-Լուիզի Սօֆիայա կէթիւրմէք իշիւն Վիէննայա կիթմիշ տիր :

Նօվօէ Վրէմիա,նըն եաղարընա նազարէն Սպանիա վէ Ամէրիգա մուհարէպէսի էսնադընտա էվրօրա հիշ պիրիսինէ մուպէնէթ իթմէյուպ պի թարաֆ պիր թալուրտա պուլունաճագ տըր :

Բէնտի իսմիլի թանըթմագ իսթէմէյէն պիր միւթէպէր ֆըրանսըղ , Սպանիա տօնանմասընա պիր մուպէնէթ իթմէք իւզրէ Բարիզ Սպանիա էլլէսինէ 250,000 ֆր. վէրմիշ քիր :

Ամէրիգալը «Նիւ-Եօրք» քըրուաղէօրի «Բէթրօ» նամ Սպանեօլ վաբօրընը թուլմըր տըր :

Ամէրիգա տօնանմասը Բուպա էօնիլնտէ սուրմըր : Ապլօգալպաշլանաճագ տըր :

Սանֆրանչիսկօտան չըզան տէօրթ տիրէքլի պի ամէրիգալը վաբօր սպանիալըլարտան թուլմըր տըր :

ԲՐԷՆՍ ՏԵՐՏԻՆԱՆՏ

—)(—

Սօֆիտա նէշը օլունան ըէսմի կաղէթանըն ապրիլ 11—23, ճումա իրթէսի կիւնքի նիւմէրօսընտա ապրիլ 10—22 թարիլի պիր իլաննամէ իլէ բրէնսի ֆէրաիլնանտ հաղըրթլէրի , գանուըն էսասըն 19ընճը մատտէսի մուճիպինճէ , ֆամիլեաճա մուհիմ վէ թէլէիլիլի նագապիլ սէպէպլէրտէն տօլայը զարպա (արեմուք) տօղրու կիտէճէկիլինի միլլէթէ իլան իթմիշ տիր :

Կ Ի Ր Ի Տ

—)(—

Կիրիտ մէսէլէսինին հալը հէր վագըթտան զիյատէ եագլաշմըր կէօրիւնիյօր : Բէթրուպուրիլ , Պէրլին վէ Վիէննա գապիլնէթօլարը պէյնինտէ ճէրէյան իթմէթտէ օլան պիր թագըմ միւզաքէրաթ իրիթամ պուլուր պուլմաղ բրէնս Եսրկիտս Կիրիտէ վալի նասպ օլունաճագ տըր :

ԱՅՑ ՇԱՀԱՆԷ

—)(—

Ատանա մէսէլէսինտէն տօլայը Լոյտ գումբանեասընըն աճէնթիւնէ թիւրք հիւքիւմէթի թարաֆընտան վուգու թէարուղաթ Ալըստրիա սէֆիրի միւտալէլէսի իլէ իրիթամ պուլմուշ տուր : Տիւկէր գապահաթլըլարըն վէ Սթանպուլ հապահանէլէրինտէ մէվճուտ քիաֆֆէի էրմէնիլէրին սէրպէսթ պըրագըրմասը իշիւն եագընտա պիր աֆըր շահանէ պէքլէնիլիյօր ըմըր :

—)(—

ՍՐԵԻԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ ՀԱՆԴԷՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ Ազգային , գրական և քաղաքական 28րդ տարի Խմբագիր-Տեղադրիչ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ Կը հրատարակուի Իզմիրի մէջ :

ՍՏԵՓԱՆ ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ Կ Ո Շ Կ Ա Վ Ա Ր Մուսալլա , հաճի Հասան աղալ օթէլլին տակ

Ճաշակաւոր , տոկուն , ձեւաւոր կողիկ շինել տալ ուղողը պէտք է գիւմէ Պ. Ստեփան Խօրասանճեանի , որուն ճարտարութիւնը մէկ վորձնով երեւան կելլայ : Գիներ գիւրամատչելի :

ԿՈՐՍՈՒԱՅ Փոքր Արմտանցի Նշան Գալիթ Բարիկեան անուն 19 տարեկան երիտասարդ մը երկուքուկէս տարիէ ի վեր անյայտ է . ու թէեւ իր բարեկամներ լսած են թէ այդպարուն Ռուսմանիոյ ու Պուլկարիոյ կողմը կը գտնուի , ցարք հաստատական լուր մը առնուած չէ : Ուստի կը խնդրուի այն ազգայիններէն որ յիշեալին ուր , ողջ կամ մեռած ըլլալուն մասին տեղեկութիւն ունին , հաճին ուղղակի իմաց տալ իմբագրութեանս : 3—3

Պ Օ Ր Ս Ա

Վառնա 15 Ապրիլ ՊՈՒՂՏԱՅ Վազօն , լիպրա 47—51 , հէքթօլ 11.40—11.55 ֆրանք Արապա , լիպրա 47—55 հէքթօլ 10—12.10 ֆրանք ԱՐԲԱ Լիպրա 38—40 հէքթօլ 5.20—6 ֆրանք ՄՐԱՐՐ Վազօն , լիպրա 57—58 հէքթօլ 6.50—6.70 ֆրանք Արապա , լիպրա 57—60 հէքթօլ 6.80—7 ֆրանք

ՅԱՍՈՒԼԵԱ 100 օգգասը 15—20 ֆրանք մալա կէօրէ Առապա մուսէլէսի Նարօլտն 21 ֆրանք հիսապը իլէ տիր . Կիւնտէ 20—25 վազօն վէ 15—20 արապա պուղտայ , 10—15 արապա արբա , 1—2 վազօն վէ 8—10 արապա մըրըր կէլմէթտէ տիր :

ՏՊԱՐԱՆ «ՆԱՐԺՈՒՄ» Կը տպագրուին ամէն լեզուէ այցեատման , հասցեատման , նամակագրուի , հարսանեկան հրաւիրագիր , մահազգ , ինչպէս նաև պրօշիւռներ : Գիներն յոյժ գիւրամատչելի : Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին :

« Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ » Վառնաի մէջ կը վաճառուի Մուսալլա , թահմիլ Կէօրիպէօյիւքեանի խանութը , Սասուն սրճարանի ծխաճաճախին քով և Ապտիւրրահման մղկիթին զէմը հայկական գրատունը , Ա. Զարբանէլեանի քով :